

committed. The severest punishment is death penalty for war crimes that threaten the security of the population and the nation. The law establishes also the moral and educational significance of punishments.

Keywords. Shahamir Shahamiryan, national security, military laws, Armenian army, military offenses, punishments.

**ԱՐԻՍՏՈՏԵԼԻ «ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ» ԵՎ «ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ԵՐԿԵՐԻ ՊԵՏՐՈՍ ԱՐԱԳՈՆԱՅՈՒ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝
ՀԱՅ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՑԹԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Անուշ Մինասյան

*Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող*

Արիստոտելի տրամաբանական երկերի ժողովածուի՝ «Օրգանոնի» բաղկացուցիչ մաս կազմող «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերը¹ հայերեն են թարգմանվել 5-րդ դարի վերջին - 6-րդ դարի սկզբին «հունաբան» դպրոցի ներկայացուցիչների կողմից՝ այդ երկերի Անանուն մեկնությունների² հետ համատեղ: Կարծում ենք, Անանուն մեկնությունների թարգմանության կարևորագույն, եթե ոչ հիմնական, պատճառ է հանդիսացել այն հանգամանքը, որ գրված լինելով պարաֆրազի ձևով, դրանք ամբողջությամբ՝ «Բան» վերտառությամբ, հատված առ հատված պարունակել են Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» աշխատությունների ամբողջական տեքստերը:

¹ Գրաբար թարգմանությամբ՝ «Ստորոգութիւնք» և «Յաղագս մեկնութեան» կամ «Պերի արմենիաս»՝ հունարենի փոքր-ինչ աղավաղված հայերեն ընթերցմամբ («Περὶ ἐρμηνείας»-«Պերի հերմենեաս»):

² Այս մեկնությունները Անանուն են կոչվում, քանի որ մինչ օրս տարբեր կարծիքներ են շրջանառվում դրանց հեղինակի ինքնության վերաբերյալ: Անանուն մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտելի, համահավաք բնագիրը Ս.Պ. Լալաֆայանի և Վ.Կ. Չալոյանի, առաջաբանը և խմբագրությունը Վ.Կ. Չալոյանի, թարգմանությունը գրաբարից ռուսերեն Ս.Ս. Արևշատյանի, Ե., 1961: Յաղագս մեկնութեան Պերիարմենիաս, Մատենագիրք Հայոց, ԺԷ. Հատոր, ԺԱ դար, Յաւելուած, Եր., 2016, էջ 796-883:

Միջնադարյան Հայաստանի կրթական հաստատություններում մեծ ուշադրություն է հատկացվել տրամաբանական գիտության դասավանդմանը¹, և այդ կրթական ծրագրի առանցքը եղել է Արիստոտելի՝ նշված տրամաբանական երկերի ուսուցանումը²: Բարդության և դժվարընկալելի լինելու պատճառով «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» աշխատություններն ունեին հանգամանալից բացատրությունների և մեկնաբանությունների կարիք, խնդիր, որը հաջողությամբ լուծում էին դրանց Անանուն մեկնությունները: Ահա թե ինչու տևական ժամանակ այդ ինքնին արժեքավոր մեկնություններն «ուղեկցել» են արիստոտելյան երկերը, և միայն հետագայում են վերջիններս առանձնացվել մեկնողական հատվածներից: Առաջադրված տեսակետի օգտին է վկայում «Մեկնության մասին» երկի Անանուն մեկնության բնագիրը հրատարակության պատրաստած Ա. Թոփչյանի հետևյալ կարևոր դիտարկումը. «Ստորոգություններ»-ի ու «Մեկնության մասին»-ի հայերեն թարգմանությունն առանձին, դատելով ձեռագրացուցակներից, հանդիպում է ոչ հաճախ և այն էլ՝ ուշ ձեռագրերում, 17-րդ դարից ոչ վաղ»³: Այս հանգամանքը, կարծում ենք, ամենին «ստվեր» չի գցում Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» աշխատությունների հին հայերեն թարգմանությունների՝ արիստոտելագիտության մեջ ունեցած կարևորագույն նշանակության վրա, քանի որ դրանք իրավամբ համարվում են այդ երկերի հնագույն և ճշգրիտ թարգմանություններից: Կարևորելով Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» աշխատությունների, ինչպես նաև նորպլատոնական Պորփյուրի (III դար)՝ «Կատեգորիաներին» նվիրված «Ներածության» թարգմանություն-

¹ Հայտնի է, որ տրամաբանությունը՝ որպես յոթ ազատ արվեստներից մեկը, ներառված էր միջնադարյան կրթության եռյակ գիտությունների/արվեստների համակարգում՝ «trivium» ծրագրում:

² Միջնադարյան Հայաստանում այդ ծրագրում ներառված է եղել նաև «Կատեգորիաներին» նվիրված Պորփյուրի Ներածությունը (թարգմ. 5-րդ դարի վերջին):

³ **Թոփչյան Ա.**, Արիստոտելի երկերի Անանուն մեկնությունները // «Արիստոտելի ժառանգությունը հայոց մշակույթի համատեքստում» (Գիտաժողովի նյութերի ժողովածու), Ե., ԵՊՀ, 2017, էջ 49:

ները՝ Կ. Միրումյանը գրում է. «Այս թարգմանությունները պատկանում են ոչ միայն հնագույն, այլև ճշտագույն թարգմանությունների շարքին: Ավելին՝ հայերեն թարգմանությունների շնորհիվ կարելի է ճշտել պահպանված հունարեն բնագրերի տեքստերը: Արիստոտելի նշված երկերը ներմուծվեցին կրթական համակարգի և գիտական շրջանառության մեջ, ինչն էապես նպաստեց դրանց տարածմանն ու յուրացմանը»¹:

Անանուն հեղինակի մեկնությունների թարգմանության հետ գրեթե միաժամանակ երևան է գալիս Դավիթ Անհաղթի (5-6-րդ դդ.) «Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտելի» աշխատությունը², որն աչքի է ընկնում տեսական-փիլիսոփայական բարձր մակարդակով, հիմնախնդիրների խորը, համակողմանի վերլուծություններով և արիստոտելյան մոտեցումներից տարամիտվող կարծիքների պատճառաբանված ու հիմնավոր հերքումներով³:

Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» աշխատությունների հայ մեկնողական ավանդույթը «երկրորդ շնչառություն» է ստանում 13-14-րդ դարերում: Եվ, հարկ է ընդգծել, որ իմաստասիրական-տրամաբանական բնույթի արիստոտելյան երկերի վերաիմաստավորման, վերաարժեքավորման այդ գործընթացում որոշիչ նշանակություն է ունեցել կաթոլիկ քարոզչական նպատակներով Հայաստան ներթափանցած լատին միսիոներների գիտակրթական գործունեությունը⁴: Բանն այն է, որ հետապնդելով եկեղեցական-

¹ Միրումյան Կ., Արիստոտելը և վաղմիջնադարյան հայ փիլիսոփայությունը // «Արիստոտելի ժառանգությունը հայոց մշակույթի համատեքստում» (Գիտաժողովի նյութերի ժողովածու), Ե., ԵՊՀ, 2017, էջ 25:

² Դավիթ Անյաղթ, Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտելի // Դավիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք: Համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս.Ս. Արևշատյանի: Եր., 1980, էջ 193-300:

³ Արիստոտելի «Կատեգորիաներ» երկի Դավիթ Անհաղթի մեկնության առանձնահատկությունների մասին մանրամասն տե՛ս Մինասյան Ա., Հովհան Ռրոտնեցին՝ Արիստոտելի երկերի մեկնիչ, Ե., 2004, էջ 25-32:

⁴ Այդ մասին մանրամասն տե՛ս Մինասյան Ա. Ա., Կաթոլիկ քարոզչական գործունեության հիմնական ուղղությունները և եկեղեցական - դավանաբանական պայքարը Հայաստանում (XIV դար), «Փիլիսոփայությունը արդի աշխարհում» (ՅՈՒՆԵՍԿՕ-ի

դավանաբանական բնույթի շահեր ու նպատակներ (հայ առաքելական եկեղեցու ինքնագլուխ (ավտոկեֆալ) կարգավիճակի վերացում, Հռոմի կաթոլիկ եկեղեցու հետ միացում՝ վերջինիս գերիշխանության ընդունմամբ)՝ կաթոլիկ միսիոներներն իրենց հայ համախոհների (միաբարների կամ ունիթորների՝ լատ. unio-միացում բառից) աջակցությամբ Հայաստանում ծավալել են նաև գրական, կրթական ակտիվ գործունեություն և իրականացրել են բազմաթիվ թարգմանական ու ինքնուրույն աշխատություններ¹: Հայ Առաքելական եկեղեցական վարդապետության դեմ պայքարում այդ աշխատությունները կոչված էին դառնալու կաթոլիկ դավանաբանական ուսմունքի հիմնավորման տեսական, մեթոդաբանական հենքը՝ ապահովելով դրա «գիտականությունն» ու իմաստասիրական-տրամաբանական հիմնավորվածությունը²:

13-րդ դարում Գիլիկյան Հայաստանում ստեղծվում են Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի՝ նշանավոր իմաստասեր և հասարակական գործիչ Վահրամ Բաբունու (13-րդ դ.) մեկնությունները³: Ի դեպ, Բաբունին իր մեկնությունների համար բնաբաններ է ընտրել թե՞ արիստոտելյան երկերի, և թե՞, առավել մեծ չափով, դրանց Անանուն մեկնությունների տեքստերից: Լինելով տարբեր ժամանակներում կարդացած դասախոսություններ

հոչակած Փիլիսոփայության համաշխարհային օրվա կապակցությամբ հրավիրված գիտաժողովի նյութեր) ժողովածուում, Գիլք VI, Եր., 2016, էջ 57-68:

¹ Աշխատությունների ցանկը տե՛ս **Ուղենքիյն Մ. Ա.**, Հայ-դոմինիկեան մատենագիտական ծանոթագրություններ, «Բազմավեպ», էջ 138-139, 229-231:

² Բանն այն է, որ հայ հոգևոր դասի ներկայացուցիչներին շատ հաճախ «գայթակղում» և կաթոլիկ դավանափոխության էին մղում կաթոլիկ քարոզիչների իմաստասիրման նորարարական եղանակներն ու «գիտականության» այն յուրօրինակ կերպը, երբ աստվածաշնչական հիմնադրույթները մեկնաբանելիս և հիմնավորելիս լայնորեն կիրառվում էին աշխարհիկ գիտելիքը և հատկապես՝ Արիստոտելի իմաստասիրական ուսմունքն ու տրամաբանությունը, կամ երբ հենց «արտաքին» գրերն էին դառնում մեկնաբանության և ուսումնասիրության առարկա:

³ **Վահրամ Բաբունի**, Լուծմունք «Ստորոգութեանցն» Արիստոտելի: Համահավաք քննական բնագիրը, թարգմ. գրաբարից ռուսերեն, առաջաբանը և ծանոթագրությունները Գ.Հ. Գրիգորյանի, խմբ. Մ.Ս. Արևշատյանի. Եր., 1967: Լուծմունք Պերի արմենի Վահրամայ: Մատենադարան, ձեռ. 1683, էջ 116ա-143բ:

(պահպանվել են համառոտ և ընդարձակ տարբերակներով)՝ Վահրամ Բաբունու մեկնություններն ունեն ընդգծված կրթական, ուսուցողական ուղղվածություն:

Այնուհետև հայ հոգևոր և գիտակրթական մշակութային միջավայրում շրջանառության մեջ են դրվում «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի՝ կաթողիկ միսիոներ, Դոմինիկյան միաբանության անդամ Պետրոս Արագոնացու (մահ. 1347թ.) մեկնությունները¹: Այս, ինչպես նաև կաթողիկ քարոզիչներ Բարդուղիմեոս Բոլոնացու (Մարադայի եպիսկոպոս, մահ. 1333թ.), Հովհաննես Անգլիացու աշխատությունները ընդօրինակվում և ուսումնասիրվում էին ոչ միայն ունիթորական հոգևոր-կրթական կենտրոններում, այլև վերջիններիս հետ գաղափարախոսական պայքարի և դավանաբանական հակամարտության մեջ գտնվող հայ առաքելական եկեղեցական կրթօջախներում: «Կաթողիկ գաղափարախոսության դեմ պայքարում հաջողության հասնելու համար հայ մատենագիրները մեծ հետաքրքրություն սկսեցին ցուցաբերել այն գրականության նկատմամբ, որը տարածում էին կաթողիկ քարոզիչներն ու գիտնականները հայերի շրջանում: Արևմտաեվրոպական հեղինակների և Հայաստանում գործող դիմինիկյան և ֆրանցիսկյան գիտնական կրոնավորների աշխատությունների հայերեն թարգմանությունների մեծաթիվ միջնադարյան մատյանները ընդօրինակվում էին ոչ միայն այստեղ հիմնադրված կաթողիկական վանքերում, այլև հայկական հանրահայտ ձեռագրատներում և վանական դպրոցներում, որտեղ ողջ այս գրականությունը հանգամանալից ուսումնասիրվում էր՝ բավականաչափ փորձառու գաղափարախոսական հակառակորդին հաջողությամբ դիմակայելու նպատակով»²:

¹ Տե՛ս՝ **Պետրոս Արագոնացի**, Համառոտ վերլուծություն Ստորագույթանց Արիստոտելի: Մատենադարան, ձեռագիր 1684, էջ 37ա-108բ: Պետրոս Արագոնացի, Սկիզբն վերլուծութեան ի վերայ գրոցն, որ կոչի Պերի արմենիա: Մատենադարան, ձեռագիր 1684, էջ 151ա-238ա:

² **Аревшатян С. С.**, К истории философских школ средневековой Армении (XIV в.). Ер., 1980, С. 6.

Արխատոտելի երկերի՝ Հայաստանում ձևավորված մեկնողական լավագույն ավանդությունների ժառանգորդման արդյունքում ստեղծվեցին Հովհան Ռոտունեցու (1315-1388 թթ.)՝ Արխատոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի մեկնությունները¹, որոնք հանրագումարային բնույթի գործեր էին և ի մի էին բերում արխատոտելյան աշխատությունների՝ Անանուն հեղինակի², Դավիթ Անհաղթի³ և Պետրոս Արագոնացու⁴ մեկնությունները: Հարկ է նշել, որ Պետրոս Արագոնացու՝ Արխատոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի մեկնությունները յուրօրինակ «մարտահրավեր» հանդիսացան Արխատոտելի նշված երկերի Հովհան Ռոտունեցու լուծմունքների ստեղծման համար: Կաթոլիկ իմաստասիրական-տրամաբանական գրականությանը «մրցակցելով դիմագրավելու» «ռազմավարությունից» ելնելով՝ հակաունիթորական ճամբարում ստեղծվեցին մի շարք այլ աշխատություններ ևս, ինչպես օրինակ՝ Հովհան Ռոտունեցու «Ասացեալ ի բան մարգարէին Դավթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են» [Սաղ. ԺԱ. 26]» քարոզը, որը յուրատեսակ փիլիսոփայական-աստվածաբանական «արձագանք» էր Բարդուղիմեոս Բոլոնացու «Յաղագս վեցօրեայ արարչութեան» աշխատությանը և այլն: Փաստորեն,

¹ **Յովհաննու Ռոտունեցու** վերլուծություն «Ստորոգութեանց» Արխատոտելի: Հավաքական տեքստը, առաջաբանը և ծանոթագրությունները Վ.Կ.Չալոյանի, Թարգմ. Ա.Ա.Աղամյանի և Վ.Կ.Չալոյանի, խմբագրությամբ Ս.Ս.Արևշատյանի: Եր., 1956, 348 էջ: Յովհան Ռոտունեցի, Համառատ լուծմունք «Պերի արմէնիաս» գրոցն, քննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա.Ա. Մինասյանի, Եր., 2014:

² Հովհան Ռոտունեցին ևս, Վահրամ Բաբունու օրինակով, իր մեկնությունների համար բնաբաններ է ընտրել ոչ միայն Արխատոտելի երկերից, այլև դրանց Անանուն մեկնություններից: Միևնույն ժամանակ, նա Անանուն մեկնությունների որոշ կարևոր հիմնադրույթներ կիրառել է նաև իր վերլուծություններում:

³ Ի դեպ, Հովհան Ռոտունեցին իր վերլուծություններում կիրառելով այս մեկնության մի շարք արժեքավոր մտքեր՝ այն սխալմամբ վերագրել է Օլիմպիոդորոսին՝ Դավիթ Անհաղթի ուսուցչին:

⁴ Պետրոս Արագոնացու մեկնություններից քաղվածքները օգտագործելով իր լուծումներում՝ Հովհան Ռոտունեցին, սակայն, լատին քարոզչի հեղինակությունը չբարձրացնելու նկատառումով, չի հիշատակում նրա անունը. նա կա՛մ ընդհանրապես որևէ հեղինակի անուն չի նշում, կա՛մ բավարար է համարում «իսկ այլք ասեն» կամ «ըստ այլ վարդապետաց է այսպես» անորոշ հղումը:

միարարության դեմ պայքարող հայ հոգևոր գործիչները, քաջատեղյակ լինելով հայ հոգևոր իրականության մեջ ավանդաբար շրջանառվող գրական աղբյուրներին, նաև խորապես ուսումնասիրում էին կաթոլիկ քարոզիչների աշխատություններն ու թարգմանական գործերը և, յուրացնելով տեսական այդ հարուստ «զինանոցը» ևս, ձեռնամուխ էին լինում ժամանակաշրջանի հրամայականով կարևորված՝ իմաստասիրական, տրամաբանական, աստվածաբանական հիմնախնդիրների շուրջ ինքնուրույն վերլուծությունների և մեկնաբանությունների շարադրմանը:

Վերադառնալով Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի Պետրոս Արագոնացու մեկնություններին՝ նախ նշենք կառուցվածքային բնույթի հետևյալ առանձնահատկությունը. աշխատություններից յուրաքանչյուրը բաղկացած է մեկ ամբողջություն կազմող, որոշակի տրամաբանությամբ շարադրված մեկնողական հատվածներից կամ պրակներից, որոնք չեն համընկնում «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի ո՛չ հին հայկական թարգմանությունների, ո՛չ էլ ներկայիս ռուսերեն թարգմանությունների գլուխների բաժանմանը:

Պետրոս Արագոնացու մեկնությունների մեկնողական հատվածներից կամ պրակներից յուրաքանչյուրը կազմված է երեք բաժնից:

Առաջին բաժնում մեկնիչը նախ ամփոփում է, թե ի՛նչ խնդրի էր վերաբերում արիստոտելյան բնագրի նախորդ գլուխը և նախապատրաստում է, թե ի՛նչ հարց պետք է քննվի սույն գլխում: Այնուհետև բնագրի այս առաջիկա մեկնվելիք հատվածում Պետրոս Արագոնացին կատարում է տեքստային բաժանումներ՝ մշտապես հղելով արիստոտելյան երկը՝ «Առաջինն անդուստ (այնտեղ)... Երկրորդն անդուստ...» ձևով: Այնպես, որ ընթերցողը կամ ուսանողը Արիստոտելի երկը ձեռքին ունենալու դեպքում կարող է հեշտությամբ կողմնորոշվել դրանում: Իր բաժանումները կատարելիս Արագոնացին առաջնորդվում է երկու սկզբունքով. առաջին, ի՞նչ հարց է քննարկում Արիստոտելը իր

երկի տվյալ հատվածում և, երկրորդ, Արիստոտելը ի՞նչ ձևով կամ եղանակով է բացահայտում քննարկվող հարցի էությունը: Բաժանումները Արագոնացին սկսում է ամենաընդհանուրից՝ Ստագիրացու համապատասխան երկից, ապա առանձնացված մասերը բաժանում է ենթամասերի, այս վերջիններս ևս հետևողականորեն բաժանելով հասնում է մինչև առանձին դրույթները:

Արիստոտելի «Մեկնության մասին» երկը Արագոնացու կողմից ներկայացվում է երկու գրքով, իսկ հետագա բաժանումներով տրոհվում է նաև այս գրքերից յուրաքանչյուրը: Ինչ վերաբերում է «Կատեգորիաներ»-ին՝ այն Արագոնացին բաժանում է երեք մասի. առաջին մասում Արիստոտելը, ըստ նրա, «ճառում է» կատեգորիաներին նախորդող հասկացությունների մասին («հոմանուն», «փաղանուն», «հարանուն»), որոնք «պիտոյանան առ ի ճանաչումն ստորոգութեանց», երկրորդ մասը նվիրված է տասը կատեգորիաներին («գոյացութիւն», «քանակ», «որակ», «առինչ» և այլն), իսկ երրորդ մասում ներկայացված են կատեգորիաներին հաջորդող հասկացությունները («հակակա», «նախկին», «համանգամայն», «շարժութիւն» և «ունել»): Այնուհետև առաջին՝ կատեգորիաներին նախորդող հասկացություններին նվիրված հատվածը, ըստ Արագոնացու, Արիստոտելը դարձյալ բաժանում է երեք մասի՝ ըստ այն երեք հատկությունների, որոնք անհրաժեշտաբար հատուկ են կատեգորիաներին (ինչպես նաև նրանց նախորդող և հաջորդող հասկացություններին). դրանք են՝ «կերպ ստորոգելոյն» (հասկացության ստորոգվելու, ասվելու եղանակը), «գոյացութիւն» (առանց կապի ասված հասկացություններ և կապով ասված՝ այսինքն՝ դատողության սուբյեկտի կամ պրեդիկատի կարգավիճակ ունեցող հասկացություններ) և «կարգ» (այդ հասկացությունների դասակարգումը): Եվ դարձյալ, այս առաջինը («կերպ ստորոգելոյն») ենթաբաժանում է երեքի՝ ըստ ստորոգելու եռակի եղանակի. առաջին՝ հոմանունաբար, ինչպես տասը ստորոգությունները, երկրորդ՝ փաղանունաբար, ինչպես ստորոգում են սեռը տեսակին, և սեռն ու

տեսակը՝ անհատին, և երրորդ՝ հարանունաբար, ինչպես ստորոգում է պատահական հատկանիշը գոյացությանը¹:

Եվ այդպես, «Կատեգորիաներ» երկի՝ համակարգային բաժանումների մեջբերված օրինակի ոգով, Արագոնացին արիստոտելյան երկերը որոշակի մեթոդաբանությամբ հետևողականորեն տրոհում է և միայն դրանից հետո ձեռնամուխ է լինում մեկնվող նյութի բովանդակային վերաշարադրմանն ու պարզաբանմանը (երկրորդ բաժին):

Երկրորդ բաժինը («Արդ ասէ...») պարունակում է նախորդ բաժնում առանձնացված և դասակարգված արիստոտելյան երկի համապատասխան հատվածի վերաշարադրանքը և մեկնիչի համակարգված ու հանգամանալից բացատրությունները: Մեկնվող երկին ուղղված հղումները («անդուստ...») այստեղ արդեն յուրատեսակ բնաբանի դեր են կատարում և հնարավոր են դարձնում ըստ մեկնվող նյութի կարևորության առանձնացնել ու հատված առ հատված վերաշարադրել, բացատրել և մեկնաբանել մեկնվող բնագիրը: Ըստ այս երկրորդ՝ վերաշարադրման բաժնի, Արիստոտելի երկը ձեռքի տակ չունեցող ուսանողը կարող է որոշակի պատկերացում կազմել մեկնվող երկի բովանդակության վերաբերյալ, իսկ մեկնիչի բացատրությունները օգնում են նրան խորապես ընկալել և յուրացնել բարդ տրամաբանական նյութը:

Երրորդ՝ ընդդիմախոսությունների հերքման բաժինը սկսվում է «շուրջ զմասամբս զայս խնդրիս» դարձվածքով և կազմված է հարց-պատասխանի («խնդրի...» «ասելի է...») ձևով: Այստեղ Արագոնացին Արիստոտելի կողմից քննվող հիմնախնդիրների կարգի, դասավորության, այդ հիմնախնդիրների վերաբերյալ առկա այլակարծությունների վերաբերյալ կարևոր հարցադրումներ է կատարում և իր պատասխաններում վերլուծում ու պարզաբանում է դրանք՝ դրսևորելով բարձր տեսական պատրաստվածություն և

¹ Տե՛ս՝ **Պետրոս Արագոնացի**, Համառոտ վերլուծություն Ստորոգութեանց Արիստոտելի, էջ 38բ-39ա:

փիլիսոփայական հիմնահարցերի շուրջ գրականության մեջ ընթացող վիճաբանություններին՝ լավատեղակություն:

Ի դեպ, Արիստոտելի երկերից Արագոնացու մեջբերումները բառացի համընկնում են դրանց՝ Անանուն մեկնությունների կազմում ներառված արիստոտելյան բնագրերի թարգմանական տեքստի հետ, այսինքն՝ Արագոնացին ևս ծանոթ է եղել և օգտագործել է այս հնագույն հայերեն թարգմանությունները, սակայն, ի տարբերություն Բաբունու և Որոտնեցու, իր մեկնաբանությունների համար նա բնաբաններ է քաղել միայն Արիստոտելի երկերից, բայց ոչ դրանց Անանուն մեկնություններից:

Նշենք, որ իր աշխատություններում Պետրոս Արագոնացին հաճախակի է հղում Արիստոտելի երկերի Բեռեցիուսի (5-6-րդ դդ.) («Բոէսիոս» կամ «Պոէսիոս» վերտառությամբ) մեկնությունները:

Թե՛ «Կատեգորիաներ», և թե՛ «Մեկնության մասին» երկերի մեկնությունների ներածական հատվածներում Արագոնացին հատուկ վերլուծության է ենթարկում տվյալ երկի ուսումնասիրության առարկայի, հեղինակի, տեսական պատճառի, մերձավոր և հեռավոր նպատակի, գիտելիքների համակարգում ունեցած տեղի հիմնահարցերը: Այսպես, նա կարծում է, որ «Կատեգորիաներ» երկի **«նիթական պատճառը կամ ենթական»** տասը կատեգորիաներն են, **հեղինակն** Արիստոտելն է, աշխատության ստեղծման **տեսական պատճառը** «ճառելու»՝ կշռադատելու կերպն է, **նպատակային անմիջական պատճառը** «Մեկնության մասին» երկն է, իսկ **նպատակային միջնորդավորված պատճառը**՝ «Անալիտիկա» աշխատությունն է, որը նվիրված է մտահանգման տեսությանը ¹ (տեքստում այս և հետագա ընդգծումներն իմն են՝ Ա.Մ.): Նույն սկզբունքով և ձևաչափով «Մեկնության մասին» երկի մեկնության ներածական հատվածում ներկայացված են նույնանման հարցադրումներ՝ այս անգամ արդեն Արիստոտելի այս երկի առնչությամբ. **«Առաջիկա**

¹ Տե՛ս Պետրոս Արագոնացի, Համառոտ վերլուծություն Ստորագրութեանց Արիստոտելի, էջ 38ա-բ:

դիտարկությունն ձեռնարկութեանս մերոյ է վասն գրոցն, որ կոչի Պերի արմենիաս, որ **արարող էր** Արիստոտէլէս, **նիւթ կամ ենթակա նորա է** բացերևութիւնն, **տեսակ՝** կերպ ճառելոյն, իսկ **վախճանականն** կրկնակի՝ հուպ և հեռի. **հուպ է** ճանաչումն բացերևութեանն, զի ճանաչեսցի ի յինքն և ի կիրս իւր, **և հեռին է՝** հաւաքաբանութիւնն¹: Հարցադրումների տիպային ձևերի («արարողական պատճառ», «նիւթ» կամ «ենթակա», «տեսական պատճառ», «վախճանական»/ »կատարունական» «հուպ» և «հեռի պատճառ» և այլն) կիրառումը վկայում է լատին քարոզչի՝ մեկնողական գործում հմտացած լինելու մասին:

Արագոնացու՝ արհեստավերժ փիլիսոփա և մեկնիչ լինելու մասին վկայում են նաև նրա տեսական, բովանդակային վերլուծություններն ու ընդհանրացումները, որոնք, ինչպես արդեն նշել ենք, յուրացվել և բազմիցս կիրառվել են նաև նրա գաղափարախոսական հակառակորդի՝ Հովհան Ռոտունեցու կողմից:

Տեսական լայն հետաքրքրություն է ներկայացնում Արիստոտէլի տրամաբանական երկերի տեղը գիտելիքների համակարգում որոշելու հիմնահարցի Պետրոս Արագոնացու քննությունը: Ընդհանրապես որևէ հիմնախնդիր քննելիս Արագոնացին, որպես կանոն, ձգտում է ընդհանրական բնույթի բացատրությունների և հիմնավորումների, որոնք ընդհանուր կանոնից կամ օրինաչափությունից են բխեցնում քննվող երևույթի բնույթն ու առանձնահատկությունները: Վերոնշյալ հիմնախնդրի վերլուծության ընթացքում ևս Արագոնացին առաջնորդվում է այդ նույն մեթոդաբանական սկզբունքով:

«Կատեգորիաներ»-ի տեղը գիտությունների համակարգում որոշելիս Արագոնացին հիմնվում է այն փաստի վրա, որ Արիստոտէլը իր «Հոգու մասին» աշխատության մեջ գիտությունները բաժանում է այնպես, ինչպիսին գիտությունների կողմից ուսումնասիրվող իրողություններն են: Իսկ իրողությունները, ըստ Արագոնացու, լինում են իմացությունից դուրս և ներս գտնվող: Եթե իմացության առարկան

¹ Պետրոս Արագոնացի, Սկիզբն վերլուծութեան ի վերա գրոցն, որ կոչի Պերի արմենիաս, էջ 152 ա:

արտաքին է իմացության նկատմամբ, մենք գործ ունենք հետևյալ գիտությունների հետ. «**Ֆիզիքա**, այսինքն՝ բնական, **մեթաֆիզիքա**՝ ի վեր քան զբնականն, և **մաթեմաթիքա**՝ ի վերայ շարժման և զգալեաց»։ Իսկ եթե իմացության առարկան իմացության ներսում է, այսինքն՝ ստեղծվում է իմացության գործընթացում, մենք գործ ունենք **բանական իմաստասիրության** հետ, «որոյ երեք են մասունք. մինն է ի կերպէ նշանակելոյն, այսինքն՝ **քերականութիւնն**, երկրորդն ի կերպէ զրուցատրութեան՝ և այս է **ճարտասանութիւնն**, երրորդն է ի կերպէ գիտելոյն՝ և այս է **լօջիքայն**»¹:

«Մեկնության մասին» երկի մեկնության մեջ նույն հիմնախնդիրը քննարկելիս Արագոնացին դարձյալ ելնում է իրողությունների ինչպիսին լինելուց, սակայն այս դեպքում խնդիրը քննարկում է ոչ թե գիտությունների (գիտակարգերի), այլ գիտելիքի տեսակների հարթության մեջ: Նա առանձնացնում է իրողությունների գոյության երեք սկզբունք՝ «այսինքն՝ բնութիւնն, կամքն և բանն», ըստ այդմ՝ տարբերակում է իրողությունների երեք տեսակներ. «ոմանք իր բնականք, որոց սկիզբն է բնութիւնն, ոմանք՝ բարոյական, որոց սկիզբն է կամքն և ոմանք՝ բանական, որոց սկիզբն է բանն»: Այնուհետև, իրողությունների տեսակներին համապատասխան դասակարգում է նաև գիտելիքի տեսակները՝ «**բնական, բարոյական և բանական**», և, զանց առնելով առաջին երկուսը, ուսումնասիրության առարկա է դարձնում բանական գիտելիքը, որի մասերից է տրամաբանականը²:

Երկու տարբեր, սակայն փոխկապակցված, եղանակներով (մի դեպքում՝ որպէս իմանալու, գիտենալու կերպը ուսումնասիրող գիտակարգ՝ տրամաբանական գիտություն, մյուս դեպքում՝ որպէս բանական գիտելիքի մաս՝ տրամաբանական գիտելիք) հանգեցնում տրամաբանականին՝ Արագոնացին այնուհետև տարբերակում է տրամաբանության բաժինները և դրանց ուսումնասիրության

¹ **Պետրոս Արագոնացի**, Համառոտ վերլուծութիւն Ստորագութեանց Արիստոտէլի, էջ 37ա-բ:

² **Պետրոս Արագոնացի**, Սկիզբն վերլուծութեան ի վերա գրոցն, որ կոչի Պերի արմենիաս, էջ 151 ա:

առարկաների առանձնահատկությունները: Այսպես, քանի որ գիտենալ կարելի է երեք եղանակով՝ սահմանման (սահմանումների միջոցով ճանաչում են պարզը), բաժանմամբ (բաժանումների միջոցով ճանաչում են բարդը, բաղադրյալը) և մտահանգմամբ (մտահանգումներն իմացության ընդհանուր միջոց են), և քանի որ բաժանումն ուղղված է սահմանման որոնմանը, իսկ սահմանումը ապացուցական մտահանգման մեջ է մտնում, ապա սահմանումն ու բաժանումը ծառայում են մտահանգմանը, ուստի, կարծում է Արագոնացին, տրամաբանական գիտության ուսումնասիրության առարկան, ի վերջո, մտահանգումն է: Մտահանգման որոշ տարբեր անմիջական ուսումնասիրության առարկա են («հույս են»)՝ ինչպես դատողությունները, որոշները միջնորդավորված («հեռի») են՝ ինչպես դատողության անդամները կամ տերմինները: Եվ ահա, «Կատեգորիաները» նվիրված են դատողության անդամների ուսումնասիրությանը, իսկ «Մեկնության մասին»-ը՝ դատողությունների¹, - եզրակացնում է Պետրոս Արագոնացին:

Մի այլ մոտեցմամբ տրամաբանական գիտելիքը տրոհվում է ըստ միասնության («միութեան») երեք ձևերի, որոնք դրսևորվում են բնական իրողությունների մեջ. առաջինը թվերի մեջ դրսևորվող բոլորովին անբաժանելի միասնությունն է, երկրորդը՝ բաղադրյալ, սակայն անանջատական միասնությունն է, որը դրսևորվում է մարդու մեջ՝ որպես նյութի (մարմնի) և տեսակի (հոգու) անբաժանելի «միություն», «զի ոչ տեսակն է մարդ և ոչ նիւթն՝ այլ բաղադրեալն ի նիւթոյ և ի տեսակէ» և երրորդը խոսքի («բանի») մեջ դրսևորվող անվան և բայի միավորման եղանակն է: Եվ ահա, Արագոնացու կարծիքով, միասնության առաջին եղանակը Արիստոտելը բացահայտում է «Կատեգորիաներ»-ում, երկրորդը՝ «Մեկնության մասին» երկում, իսկ երրորդը՝ տրամաբանության այն բաժնում,

¹ Տե՛ս **Պետրոս Արագոնացի**, Համառոտ վերլուծութիւն Ստորագութեանց Արիստոտելի, էջ 37բ-38ա:

որտեղ ներկայացնում է մտահանգման մասին իր ուսմունքը¹: Ի դեպ, բնական, բարոյական և բանական իրողությունների բաժանման և ըստ այդմ՝ գիտությունների դասակարգման, ինչպես նաև միասնության երեք եղանակների մասին Արագոնացու մտքերը ստեղծագործաբար ժառանգվել են նրա դավանաբանական հակառակորդի՝ Հովհան Որոտնեցու կողմից և որոշակի փոփոխություններով տեղ գտնել «Պերի արմենիաս»-ի նրա մեկնության մեջ²:

Առանձնակի հետաքրքրություն ունի միջնադարյան փիլիսոփայության մեջ մեծ կարևորություն ստացած ունիվերսալիաների հիմնախնդրի վերաբերյալ Պետրոս Արագոնացու տեսակետը: «Կատեգորիաներ» երկում արծարծվող խնդիրների շարքում ունիվերսալիաների հիմնահարցը ձևակերպվում է որպես առաջին և երկրորդ էությունների (գոյացությունների) փոխհարաբերության խնդիր: Բանն այն է, որ Արիստոտելը առաջին գոյացություն է համարում անհատը/եզակին, իսկ երկրորդ գոյացություն՝ տեսակը և սեռը, այդ երկուսից առաջին գոյացությունը համարելով «իսկապես և առաջին և մանաւանդ գոյացութիւն», այսինքն՝ որոշակի գերակայություն տալով անհատին: Այս թեմայի շրջանակներում Արագոնացին «շուրջ զմասամբս զայս խնդրին...» մեկնողական բաժնում ձևակերպում է մի շարք հարցեր, որոնց պատասխանները բացահայտում են ունիվերսալիաների հիմնախնդրի նկատմամբ նրա մոտեցումը:

Այսպես, Երկրորդ կետով ձևակերպում է այսպիսի հարց՝ ինչու Արիստոտելը չսկսեց սեռականագույնից, քանի որ ինչպես ինքը՝ փիլիսոփան (Արիստոտելն) է ասում իր բնագիտության մեջ՝ առավել ընդհանուրը նախկին է իր բնույթով: Ըստ Արագոնացու, առաջին գոյացությանը առաջնություն է տրվում, քանի որ այն ենթակա է շատերի համար, և «այլքն» (երկրորդ գոյացությունները և պատահական հատկանիշները) նրա մեջ են («են ի նմա»), և առաջին

¹ Տե՛ս **Պետրոս Արագոնացի**, Սկիզբն վերլուծութեան ի վերա գրոցն, որ կոչի Պերի արմենիաս, էջ 151բ-152ա:

² Տե՛ս **Հովհան Որոտնեցի**, Համառատ լուծմունք «Պերի արմենիաս» գրոցն, էջ 51-52:

գոյացության վերանալու դեպքում երկրորդ գոյացությունները և պատահական հատկանիշները չեն կարող մնալ, և թեև, կարծում է լատին քարոզիչը, «բնականապես» առավել հայտնի կամ իմանալի («ծանօթ») է երկրորդ գոյացությունը, «սակայն ըստ մեզ առաել ծանօթագոյն է առաջին գոյացութիւնն, քան գերկրորդն»¹:

Վեցերորդ կետով հարցն ավելի արմատապես է ձևակերպվում՝ անհատի չլինելու դեպքում չեն լինի նաև ընդհանուր հասկացությունները (ըստ Արիստոտելի), սակայն չէ որ նրանք հավերժական գոյացություններ («մշտնջենաւորականք») են: Արագոնացու պատասխանը հակիրճ և հստակ է՝ անհատի և մասնավորի վերանալու հետ կվերանա նաև նրանց մեջ եղած ընդհանուրը, սակայն ընդհանուրը կմնա իմացության մեջ. «Ասելի է, թէ ընդ ոչ լինել մասնաւորացն՝ ոչ մնան ի նոսին ընդհանրականքն, այլ մնան ի յիմացումն»²:

Եվ, վերջապես, տարակարծությունների հերքման բաժնի յոթերորդ կետի հարցադրումն այսպիսին է. եթե (ըստ Արիստոտելի) ամեն ինչ (երկրորդ գոյացությունները՝ սեռը և տեսակը, և պատահականը՝ մնացած ինը կատեգորիաները) ասվում են անհատի (առաջին գոյացության) մասին կամ գտնվում են նրա մեջ, ապա առաջին գոյացության մեջ գտնվողը ևս մասնավոր է, քանի որ իմացությունից դուրս ոչինչ ընդհանուր չէ: Իր պատասխանում Արագոնացին ներկայացնում է քննվող խնդրին Պլատոնի և Արիստոտելի տարամիտվող մոտեցումները. եթե ընդհանուրը հասկացվում է որպես տեսակ և կամ որպես նախագաղափար, ապա ըստ Պլատոնի, այն չի ասվում և չի գտնվում եզակիի և մասնավորի մեջ, այնինչ ըստ Արիստոտելի, ընդհանուրը գտնվում է եզակիի մեջ և ասվում է նրա մասին, քանի որ ինչպես վերջինս գրում է իր «Անալիտիկա» գրքում՝ ընդհանուրը բազում եզակիներից դուրս չի գտնվում, այլ լինելով մեկը՝ գտնվում է բազմաթիվ առանձին իրերի մեջ. «ընդհանրականն ոչ

¹ Տե՛ս **Պետրաս Արագոնացի**, Համառոտ վերլուծութիւն Ստորոգութեանց Արիստոտելի, էջ 50ա:

² Նույն տեղում, էջ 50բ:

է մի բաց ի բազմաց, այլ է մի ի բազումս»¹: Ընդունելով ընդհանուրի գոյաբանական կարգավիճակը՝ Արագոնացին կարծում է, որ եզակիի մեջ լինելու առումով ընդհանուրը եզակիի նկատմամբ չունի առաջնայնություն («ըստ այնմ, որ է յեզականս իւր՝ և յայնժամն ոչ է նախկին նոցին»), սակայն իմացաբանական առումով ընդհանուրը եզակիի նկատմամբ առաջնային է («ըստ այնմ, որ է ի յիմացումն՝ և այսպէս է նախկին»)²:

Ընդհանրացնելով առաջին և երկրորդ գոյացությունների վերաբերյալ Արագոնացու մտքերը՝ կարող ենք արձանագրել, որ Արագոնացին ընդունում է ընդհանուրի գոյությունը իրերի մեջ («universalia in re»՝ «ընդհանրական... է մի ի բազումս»), ընդհանուրի գոյությունը իրերից առաջ («universalia ante rem»՝ «առաւել հասարակքն են նախկին բնութեամբ») և ընդհանուրի գոյությունը իրերից հետո («universalia post rem»՝ «ընդ ոչ լինել մասնաւորացն՝ ոչ մնան ի նոսին ընդհանրականքն, այլ մնան ի յիմացումն»), այսինքն՝ հետևում է Թովմա Աքվինացու մոտեցմանը՝ ունիվերսալիաների հիմնահարցին տալով չափավոր ռեալիստական լուծում: Իր մեկնաբանություններում անդրադառնալով Արիստոտելի՝ եզակին/անհատը՝ առաջնային, իսկ սեռն ու տեսակը երկրորդային համարելու դրույթին՝ լատին քարոզիչը առանձնակի մեծ «շահագրգռություն» չի դրսևորում այդ դրույթի տեսական-փիլիսոփայական հիմնավորման համար (ինչպես վարվում է Հովհան Որոտնեցին), նա ավելի շատ հակված է արիստոտելյան թեզը տրամաբանական բնույթի պատճառաբանություններով արդարացնելուն:

Պետրոս Արագոնացու՝ ունիվերսալիաների հարցում չափավոր ռեալիստական դիրքորոշումը, իր ակունքներն ունենալով այդ ժամանակաշրջանում Եվրոպայում մեծ տարածում ստացած թոմիզմի փիլիսոփայական-աստվածաբանական ուսմունքում, նաև որոշակիորեն արտահայտում էր կաթոլիկ եկեղեցու՝ ազգային քրիստոնյա

¹ Նույն տեղում, էջ 50բ:

² Նույն տեղում, էջ 104բ:

եկեղեցիների նկատմամբ գերակա դիրք ունենալու և Հռոմի պապի՝ բոլոր քրիստոնյաների ընդհանուր գլուխ լինելու եկեղեցական-դավանաբանական (գաղափարախոսական, քաղաքական) հավակնությունները: «Ռեալիստական լուծումը, որն ընդհանուրի և մասնավորի հարաբերության հիմնահարցին տալիս էին Եվրոպայից ժամանած կաթոլիկ քարոզիչները, գերազանցությունը վերապահելով ընդհանուրին, յուրահատուկ փիլիսոփայական հիմնավորում էր հանդիսանում ընդհանրական եկեղեցու առաջնության և առավելության, ինչպես նաև աշխարհի բոլոր քրիստոնյաների՝ միասնական ղեկավար (ինչին հավակնում էին Հռոմի պապերը) ունենալու անհրաժեշտության գաղափարների համար»¹:

Հարկ է ընդգծել, որ ի հակադրություն կաթոլիկ քարոզիչների, Հայ առաքելական եկեղեցու ինքնուրույն կարգավիճակի հետևողական պաշտպաններ Հովհան Ռոտունեցին, ինչպես նաև նրա աշակերտն ու հետևորդը՝ Գրիգոր Տաթևացին, հանդես էին գալիս չափավոր նոմինալիզմի դիրքերից. «Հովհան Ռոտունեցու և Գրիգոր Տաթևացու կողմից առանձինի կամ եզակիի՝ «իսկական, առաջնային և առավելապես գոյացություն» լինելու վերաբերյալ արխատոտեյան թեզի ընդգծված շեշտադրումը հակադրվում էր ունիթորական ճամբարի «ռեալիստական» հիմնադրույթներին և որպես հակաունիթորական ուղղության ամենակարևոր փաստարկ՝ հիմնավորում էր առանձին, ազգային եկեղեցիների նախապատվությունը, որոնց գոյությունից էր կախված ընդհանուր քրիստոնեության և նրա՝ «ընդհանուր գլխավորի» գոյությունը»:² Ահա այսպես, միջնադարյան իմաստասիրական բանավեճերի կիզակետում գտնվող մի շարք կարևորագույն տեսական հիմնախնդիրներ ունեին ոչ միայն փիլիսոփայական, այլև դավանաբանական, աստվածաբանական նշանակություն, որոշ դեպքերում՝ նաև եկեղեցական-քաղաքական ենթախորք:

¹ **Արեշատյան Ս.Ս.**, Բարդուղիմեոս Բոլոնիացու հայկական ժառանգությունը, Ե., 2014, էջ 64:

² Նույն տեղում, էջ 67:

Եվ այսպես, ամփոփելով Արխատոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերի Պետրոս Արագոնացու մեկնությունների դերն ու նշանակությունը հայ մեկնողական ավանդույթի համատեքստում, կարող ենք եզրակացնել հետևյալը.

- Պետրոս Արագոնացու մեկնությունների ի հայտ գալը պայմանավորված էր կաթոլիկ քարոզչության տեսական, փիլիսոփայական հիմնավորումների և տրամաբանական, մեթոդաբանական ապահովման անհրաժեշտությամբ:

- Այս մեկնությունները և կաթոլիկ միսիոներների՝ նմանատիպ մի շարք այլ աշխատություններ ապահովում էին նաև կաթոլիկ քարոզչության յուրօրինակ «գիտականությունը», ինչը մի շարք դեպքերում քարոզչական «խայծի» դեր էր կատարում հայ առաքելական եկեղեցու որոշ անփորձ վարդապետների համար՝ դավանափոխ լինելու և կաթոլիկություն ընդունելու առումով:

- Արագոնացու մեկնությունները յուրօրինակ «ազդակ» և «մարտահրավեր» հանդիսացան հայ առաքելական եկեղեցուն հավատարիմ վարդապետների համար՝ Արխատոտելի իմաստասիրական, տրամաբանական ժառանգության վերաարժևորման, «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերին վերստին և նորովի անդրադառնալու համար:

- Հիմնվելով Եվրոպայում շրջանառվող Արխատոտելի նշված երկերի այլ մեկնությունների, և ընդհանրապես եվրոպական փիլիսոփայական, տրամաբանական, աստվածաբանական գրական աղբյուրների վրա, այս աշխատությունները նոր շունչ, թարմ բովանդակություն և տեսաբանման նորարարական եղանակներ ներմուծեցին հայ միջնադարյան գիտակրթական մշակույթի մեջ:

- Մեկնություններում արծարծվող որոշ իմաստասիրական հիմնախնդիրներ ունենին եկեղեցական-դավաբանական «ենթախորք» և առնչվում էին Հռոմի կաթոլիկ եկեղեցու՝ ազգային եկեղեցիները դավանաբանական ինքնությունից և ինքնուրույն ղեկավարումից զրկելու, դրանք Հռոմի կաթոլիկ եկեղեցուն ենթարկելու, համայն աշխարհի քրիստոնյաներին մեկ ընդհանրական քրիստոնեական

եկեղեցու հովանու ներքո միավորելու «միաբարական» քաղաքականության հետ, որի ուսյալ գաղափարախոսներից և գործուն քարոզիչներից էր արիստոտելյան երկերի մեկնիչ Պետրոս Արագոնացին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերը հայերեն են թարգմանվել 5-րդ դ. վերջին – 6-րդ դ. սկզբին, դրանք բազմիցս մեկնաբանվել են հայ մտածողների կողմից և դասավանդվել միջնադարյան Հայաստանի ուսումնական հաստատություններում: Արիստոտելի երկերի հայ մեկնողական ավանդույթի համատեքստում հոդվածում վերլուծվում է կաթոլիկ միսիոներ, Դոմինիկյան միաբանության անդամ Պետրոս Արագոնացու (մահ. 1347 թ.)՝ արիստոտելյան երկերի մեկնությունների նշանակության հիմնահարցը: Այդ մեկնությունները ստեղծվել են կաթոլիկ քարոզչության տեսական, փիլիսոփայական հիմնավորման և տրամաբանական, մեթոդաբանական ապահովման նպատակով: Դրանք, ինչպես նաև կաթոլիկ միսիոներների՝ մի շարք աշխատություններ և թարգանություններ, ապահովում էին նաև կաթոլիկ դավանանքի հիմնավորման յուրօրինակ «գիտականությունը», ինչը մի շարք դեպքերում քարոզչական «խայծի» դեր էր կատարում հայ առաքելական եկեղեցու որոշ անփորձ վարդապետների համար՝ դավանափոխ լինելու և կաթոլիկություն ընդունելու առումով: Կաթոլիկ քարոզչի մեկնությունները յուրօրինակ «ազդակ» և «մարտահրավեր» հանդիսացան հայ առաքելական եկեղեցուն հավատարիմ վարդապետների համար՝ Արիստոտելի իմաստասիրական, տրամաբանական ժառանգության վերաիմաստավորման, «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերին վերստին և նորովի անդրադառնալու համար: Հիմնվելով եվրոպական գրական՝ փիլիսոփայական, տրամաբանական, աստվածաբանական աղբյուրների վրա, Արագոնացու մեկնությունները թարմ բովանդակություն և փաստարկման նորարարական մեթոդներ ներմուծեցին հայ միջնադարյան գիտակրթական մշակույթի մեջ:

Բանալի բառեր՝ միջնադարյան հայ փիլիսոփայություն, մեկնություն, մեկնողական ավանդույթ, Արիստոտել, տրամաբանություն, Պետրոս Արագոնացի, կաթոլիկ քարոզչություն, դավանաբանություն, ունիթորություն, հակաունիթորություն:

**INTERPRETATIONS OF ARISTOTLE'S WORKS «CATEGORIES» AND
«ON INTERPRETATION» BY PETER OF ARAGON IN THE CONTEXT OF
THE ARMENIAN EXEGETIC TRADITION**

Anush Minasyan

*Candidate of Philosophical Sciences,
Senior Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

Aristotle's works «Categories» and «On Interpretation», translated into Armenian at the end of the 5th and at the beginning of the 6th centuries, were numerously interpreted by Armenian thinkers, and taught in educational institutions of medieval Armenia. In the context of the Armenian exegetic tradition, the article analyzes the problem of the role of the Interpretations of the Aristotle's works by the Catholic missionary, representative of the Dominican monastic Order Peter of Aragon (died in 1347). These Interpretations were created for the purpose of theoretical, philosophical justification and logical, methodological support of Catholic dogmatic propaganda. They, as well as a number of other works and translations of Catholic missionaries, provided a kind of «scientific» justification of Catholic dogma, which in some cases played the role of «bait» for some inexperienced monks of the Armenian Apostolic Church with regard to apostasy and acceptance of Catholicism. The Interpretations of the Catholic preacher became a kind of «signal» and «challenge» for the faithful monks of the Armenian Apostolic Church for rethinking the philosophical and logical heritage of Aristotle, and for repeated and fresh treatment of the works «Categories» and «On Interpretation». Basing upon the European

literary - philosophical, logical, and theological sources, the Interpretations of Peter of Aragon's brought fresh content and innovative methods of argumentation to the Armenian medieval scientific and educational culture.

Keywords: Medieval Armenian philosophy, interpretation, exegetic tradition, Aristotle, logic, Peter of Aragon, catholic propaganda, dogmatics, Unitorian, anti-Unitorian.

ТОЛКОВАНИЯ ПЕТРА АРАГОНСКОГО ТРУДОВ АРИСТОТЕЛЯ «КАТЕГОРИИ» И «ОБ ИСТОЛКОВАНИИ» В КОНТЕКСТЕ АРМЯНСКОЙ ЭКЗЕГЕТИЧЕСКОЙ ТРАДИЦИИ

Ануш Минасян

*Кандидат философских наук,
старший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА*

РЕЗЮМЕ

Сочинения Аристотеля «Категории» и «Об истолковании», переведенные на армянский язык в конце V - начале VI веков, неоднократно комментировались армянскими мыслителями и преподавались в учебных заведениях средневековой Армении. В статье в контексте армянской экзегетической традиции анализируется значение толкований аристотелевских трудов католического миссионера, представителя Доминиканского монашеского ордена Петра Арагонского (умер в 1347 г.). Эти толкования были созданы с целью теоретического, философского обоснования и логического, методологического обеспечения католической догматической пропаганды. Данные труды, а также ряд других работ и переводов католических миссионеров, обеспечивали своеобразную «научность» обоснования католической догматики, которая в ряде случаев играла роль «приманки» для некоторых неопытных монахов Армянской апостольской церкви в плане вероотступничества и принятия католицизма. Толкования католического проповедника стали своеобразным «сигналом» и «вызовом» для верных Армянской

апостольской церкви вардапетов для переосмысления философского, логического наследия Аристотеля, повторного и свежего обращения к сочинениям «Категории» и «Об истолковании». Основываясь на европейских литературных - философских, логических, богословских источниках, толкования Арагонского привнесли свежее содержание и новаторские методы аргументирования в армянскую средневековую научно-образовательную культуру.

Ключевые слова: средневековая армянская философия, толкование, экзегетическая традиция, Аристотель, логика, Петр Арагонский, католическая пропаганда, догматика, униатство, антиуниатство.

К ВОПРОСУ О ФИЛОСОФСКИХ ОСНОВАНИЯХ ТЕОРИИ РОМАНТИЧЕСКОЙ ИРОНИИ

Светлана Арзумян

*Кандидат философских наук, доцент,
старший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА*

Не секрет, что большая часть художественных произведений, создаваемых с начала XX века вплоть до нашего времени, не поддается однозначной оценке. Более того, к некоторым из них понятие «художественный» применимо лишь с большими оговорками. И тем не менее, они прочно сохраняют свое место в границах искусства. Причины для этого могут быть самые разные. Например, достаточной основой для признания какого-либо предмета или действия в качестве художественного, может служить лишь то, что оно создано человеком, имеющим профессиональное художественное образование, или, что созданный предмет, процесс или представленная идея признаются в качестве художественных неким сообществом, имеющим на это право. Они демонстрируются в художественных музеях, галереях и салонах; становятся предметом исследования искусствоведов, эстетиков, социологов, философов, которые посвящают им статьи и монографии; о них снимаются фильмы и рекламы, выпускаются телепередачи; сведения об этих феноменах и их авторах распространяются по всему миру с